ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2026թ. թիվ 584-Ա

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի ապրիլի 25-ի թիվ 433 և 2025 թվականի հուլիսի 28-ի թիվ 765 հրամանները, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 766-Ա որոշումը և հաշվի առնելով Մ.Դալլաքյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մերի Դալլաքյանին տրամադրել 2024-2025թթ. աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդների մնացած մասը 2026թ. օգոստոսի 17-ից 28-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Մ.Դալլաքյանի արձակուրդում գտնվելու ընթացքում փոխարինող նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

4. Մ.Դալլաքյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 31-ից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-04 12:04:12 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. օգոստոսի 4
ք.Վանաձոր